ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժնի պետ Գառնիկ Մոմջյանի 2022 թ. դեկտեմբերի 3-6-ը Բաղդադ (Իրաքի Հանրապետություն) գործուղման վերաբերյալ

Գործուղված անձ՝ Գառնիկ Մոմջյան

Գործուղված անձի պաշտոնը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ 2022 թ. դեկտեմբերի 3-6-ը Բաղդադ (Իրաքի Հանրապետություն):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 6-րդ նախարարական հանդիպմանը Հայաստանի Հանրապետության ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահե Գևորգյանի գլխավորած պատվիրակության կազմում:

Քննարկված թեմաները՝ Անդամ պետությունների պատվիրակությունների ղեկավարները հանդես են եկել ելույթներով՝ կարևորելով մշակութային ժառանգության պահպանությունը՝ հակամարտությունների ժամանակ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ֆորումի ժամանակ քննարկվել են աշխարհագրական տարբեր շրջաններից հնագույն քաղաքակրթությունների օրրան հանդիսացող երկրների միջև հետագա մշակութային համագործակցության խորացման, համատեղ ծրագրերի, միջոցառումների անցկացման հարցեր: Հատկապես կարևորվել է մշակութային արժեքների ապօրինի արտահանման և ներմուծման դեմ ձեռնարկվելիք քայլերը: Քննարկվել է մշակութային դիվանագիտությանը նվիրված հարցեր՝ այն համարելով մշակութային և արտաքին քաղաքական կարևոր գործիքներից մեկը:

Ֆորումի շրջանակներում այցելություն է եղել Բաբելոն քաղաք:

Հանդիպման կամ հավաքի **ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ֆորումի շրջանակներում ընդունվել է Բաղդադի հռչակագիրը, որը ամրագրել է մշակութային ժառանգության կարևորությունը, նրա հետագա պահպանությունը և հանրահռչակումը: Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային ժառանգության պահպանությունը՝ բացառելով քաղաքական կամ կրոնական խտրականությունը: Հռչակագրում առանձնակի շեշտվել է մշակութային արժեքների ապօրինի արտահանման և ներմուծման դեմ պայքարի մասին:

Ստորագրությունը, ամսաթիվը:

04.12.2022